# ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի վեցերորդ գումարման աշխատանքների արդյունքների մասին

(2017-2018թթ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման ընթացքում գումարվել է 17 հերթական և 16 արտահերթ նիստ՝ 13-ը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, 3-ը՝ ԱԺ պատգամավորների: Բացի սրանից գումարվել է նաև 5 հատուկ նիստ, ինչպես նաև 5 արտահերթ նստաշրջան՝ 4-ը՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, 1-ը՝ ԱԺ պատգամավորների:

ՀՀ ԱԺ-ի վեցերորդ գումարման ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը քննարկել և վավերացրել է 57 միջազգային պայմանագիր և ամբողջությամբ ընդունել 235 օրենսդրական նախաձեռնություն (օրենքների նախագծեր, նախագծերի փաթեթներ), որոնցից 214-ը ՀՀ կառավարության, 20-ը ԱԺ պատգամավորների, իսկ 1-ը՝ ՀՀ կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախաձեռնություններ էին: Ընդունվել է նաև ԱԺ որոշման 2 նախագիծ և ԱԺ 2 հայտարարություն: Ընդունված օրենսդրական նախաձեռնություններից զատ քննարկվել են նաև պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր: Մասնավորապես՝ 1 անգամ Ազգային Ժողովի կողմից ընտրվել է ՀՀ նախագահ, 5 անգամ քննարկվել է վարչապետի ընտրության հարց և 2 անգամ ընտրվել է ՀՀ վարչապետ: Ընդ որում 2 անգամ անընդմեջ վարչապետ չընտրելու հիմքով ՀՀ ԱԺ-ն իրավունքի ուժով վաղաժամկետ լուծարվեց: 2 անգամ հավանություն է տրվել կառավարության ծրագրերին, 1 անգամ ՀՀ դատախազի միջնորդությամբ հավանություն է տրվել պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելուն, 1 անգամ Էրեբունի-Երեվանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ հայտարարվել է համաներում, 1-ական անգամ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրվել

են Բարձրագույն Դատական Խորհրդի անդամներ, Սահմանադրական դատարանի նախագահ, անդամ և Վճռաբեկ դատարանի նախագահ: Ինչպես նաև 3 անգամ ՀՀ ԱԺ-ի կողմից մերժվել է Սահմանադրական դատարանի թեկնածուի ընտրությունը:

Գումարման ընթացքում մերժվել է նստաշրջանի օրակարգ ընդգրկել 2 ԱԺ որոշման նախագիծ (1-ը ԱԺ պատգամավորների որոշմամբ՝ արտահերթ), 6 օրենսդրական նախաձեռնություն՝ բոլորն էլ ԱԺ պատգամավորների նախաձեռնած: Գումարման ընթացքում 2 անգամ մերժվեց Ընտրական օրենսգրքում փոփոխությունների կատարումը՝ 1 անգամ ՀՀ կառավարության հրավիրած արտահերթ նիստի ժամանակ 1 անգամ՝ ԱԺ պատգամավորների: ԱԺ վեցերորդ գումարումը նշանավորվեց նաև նրանով, որ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդունվեց արդեն իսկ արձակված խորհրդարանի կողմից, ինչպես նաև 2015 թ. Սահմանադրական փոփոխությունների ուժով ՀՀ Ազգային ժողովը առաջին անգամ ձևավորեց 2 քննիչ հանձնաժողով:

Գումարման ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 21 գրավոր և 200 բանավոր հարցով, ինչպես նաև 2 հարցապնդումով: Հնչել է 216 հայտարարություն, որից 96-ը վերաբերվել է կառավարության գործունեությանը:

Հիշարժան են նաև ՀՀ Ազգային Ժողովի ընդունած հայտարարությունները՝ ահաբեկչական խմբավորումների կողմից իրենց վերահսկողության ներքո գտնվող Իրաքի Հանրապետության տարածքներում եզդի ժողովրդի նկատմամբ 2014 թվականին իրականացված ցեղասպանության ճանաչման և Սումգաիթյան ոճրագործության 30-րդ տարելիցի կապակցությամբ:

2018 թվականի ապրիլի 9-ին ՀՀ Սահմանադրության ամբողջ ծավալով ուժի մեջ մտնելու հանգամանքով պայմանավորված ընդունվեցին մի շարք համակարգային նշանակություն ունեցող օրենքների նախագծեր.

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքը՝ կից օրենքների փաթեթով: Սույն օրենքի ընդունմամբ՝ նոր սահմանադրության

համաձայն, սահմանվել է Կառավարության կազմը և կառուցվածքը, ամրագրվել են Կառավարության կազմավորման կարգի, ժամկետների, Կառավարության անդամների լիազորությունների ստանձնման, Կառավարության կազմում փոփոխությունները, Կառավարության հրաժարականը կարգավորող դրույթները, կարգավորվել են Կառավարության անդամների՝ վարչապետի, փոխվարչապետների, նախարարների իրավասությունները:

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքը՝ կից օրենքների փաթեթով: Սույնով ստեղծվում է արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ, նոր պետական մարմին՝ Վերահսկիչ պալատի փոխարեն:

«Սահմանադրական դատարանի մասին» Սահմանադրական օրենքը՝ կից օրենքների փաթեթով: Վերջինիս ընդունմամբ ապահովվում է Սահմանադրական դատարանի՝ որպես սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի արդյունավետ գործունեությունը, հստակեցվում է Սահմանադրական դատարանի դատավորին ներկայացվող պահանջները և այլն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքը՝ կից օրենքների փաթեթով: Սույնով ամրագրվել են դատական իշխանության կազմակերպման, գործունեության հիմունքները և սկզբունքները, սահմանվել են Հայաստանի Հանրապետության դատարանների կառուցվածքը, կազմը և նրանց իրավասության տիրույթները՝ որպես Սահմանադրությամբ չնախատեսված մասնագիտացված դատարան ամրագրելով սնանկության դատարանը, կարգավորվել են դատարանների և դատական իշխանության ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերը, ամրագրվել են դատավորի գործունեության երաշխիքները, նախատեսվել են դատավորի վարքագծի և էթիկայի կանոնները, նախատեսվել են դատական սանկցիաների տեսակները և դրանք կիրառելու հիմքերն ու կարգը, սահմանվել են դատավորի գործունեության գնահատման չափանիշները,

կարգավորվել են Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման և գործունեության հետ կապված հարցերը:

«Հանրային խորհրդի մասին» օրենքը՝ կից օրենքների փաթեթով: Սույն օրենքով ամրագրվել են Հանրային խորհրդի գործունեության խնդիրները և գործառույթները, սահմանվել են Հանրային խորհրդի կառուցվածքը, կազմավորման և գործունեության կարգը, նախատեսվել են Հանրային խորհրդի անդամին ներկայացվող պահանջները, սահմանվել է, որ Հանրային խորհրդին կից գործում են 15 ոլորտային մշտական հանձնաժողովներ, կարգավորվել են Հանրային խորհրդի անդամի գործունեության դադարեցման և դադարման հիմքերի հետ կապված հարցերը, նախատեսվել են Հանրային խորհրդի գործունեության ապահովմանը վերաբերող դրույթներ:

«Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքը՝ կից օրենքների փաթեթով: Վերջինս ամրագրում է Անվտանգության խորհրդի կարգավիճակը, գործառույթը և լիազորությունները, սահմանում է Անվտանգության խորհրդի կազմը, Անվտանգության խորհրդի գործունեության կարգի հետ կապված հարաբերությունները, բնականոն գործունեության ապահովմանը վերաբերող դրույթներ, ինչպես նաև նախատեսում է Անվտանգության խորհրդի որոշումների տեսակները և դրանց ընդունման կարգը:

«Միջազգային պայմանագրերի մասին» օրենքը՝ կից օրենքների փաթեթով: Այս օրենքի ընդունումը անհրաժեշտություն է դառնում 2018թ. նորընտիր նախագահի պաշտոնը ստանձնելու պահից պետական կառավարման խորհրդարանական ձևի վերջնական հաստատմամբ և կառավարության դերի բարձրացման հետևանքով արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների ոլորտում պետական գործառույթների վերաբաշխմամբ և դրանով պայմանավորված գործող ընթացակարգերի վերանայմամբ: Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, ուժի մեջ մտնելու, կատարման, փոփոխման գործողության կասեցման, դադարեցման, երկարաձգման

և դրանց հետ կապված այլ հարաբերությունները: Ընդ որում Սահմանադրական փոփոխություններով պայմանավորված միջազգային պայմանագրերը հետայսու վավերացվում են օրենքով:

Ազգային Ժողովի վեցերորդ գումարման ընթացքում ընդունվեցին նաև մի շարք այլ կարևորագույն օրենքներ: Մասնավորապես՝ Ընտանիքի ինստիտուտը ամրապնդելու նպատակով Ազգային ժողովի կողմից ընդունվել են Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին օրենքի նախագիծը: Այս օրենքները կոչված են, պահպանելով հայկական ավանդույթները, ավելի ամուր դարձնելու հայ ընտանիքը և զերծ պահելու այն բռնությունից: Շատ կարևոր և հայեցակարգային օրենքներ են ընդունվել նաև ռազմական ոլորտում՝ ի դեմս Պաշտպանության մասին և Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին օրենքների: Վերջիններիս ընդունմամբ բավական մեծ փոփոխություններ կատարվեցին զինապարտության ինստիտուտում, հստակեցվեցին կամավորականության սկզբունքները, ինչպես նաև լուրջ և գործուն քայլեր նախատեսվեցին ազգ-բանակ կոնցեպտին անցման համար: Սոցիալական ոլորտին վերաբերվող հիշարժան օրենք էր «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքը, որով ամբողջ ծավալով ուժի մեջ է մտնում կուտակային կենսաթոշակի պարտադիր բաղադրիչը և որպեսզի այս անցումը ավելի սահուն լինի՝ պետությունը կենսաթոշակային համակարգի մասնակցի կուտակած եկամուտում ավելացնում է իր մասնաբաժինը՝ 5%-ից դարձնելով 7.5%, իսկ մասնակցի մասնաբաժինը համապատասխանաբար 5%-ից իջեցնում է՝ դարձնելով 2.5%: Նախընտրական պրոցեսների օրինականությունը պահպանելու նպատակով ընդունվեցին «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով փորձ է արվում կանոնակարգել բարեգործության ոլորտը և մասնավորապես խոչընդոտել

բարեգործությունը որպես ընտրակաշառք օգտագործելու հնարավորությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխությունների կատարումը, որով ավելի խստացվեցին ընտրակաշառք տալու, վերցնելու և ընտրական պրոցեսներում այլ օրինազանցություններ կատարելու համար նախատեսված պատիժները՝ վարչական պատասխանատվությունից տեղափոխելով այն քրեական պատասխանատվության ոլորտ: